Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10861

Արարատի բնակչութիւն.

Բանաստեղծութիւն
Հորդեր

Վենետիկ տպարանում
1890

891.99
Ռ-64

2003

891.99
Ն-64

№ 1.

ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԵԱՆՑ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

(1887-1890)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայկական Բանասիրաց
7/VI. 1922
Ինվենտ. Ինվենտարի
Ա. ՍՅԱՍՆԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ.
ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ.
1890

2602

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Апрѣля 1890 года

Типографія К. С. Саноянца, въ Александрополѣ.
на Бебутовск. ул., въ собствен. домѣ.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Այլ նպատակով
Մի բանի համար
Ես չը գրեցի,
Այլ աշխատելը
Պարապ մանդալուց
Լաւ համարեցի։
Որքան էլ այս իմ
Նուազ աշխատանք
Լինի շատ հեռու
Իւր նպատակից,
Էլի ինձ համար
Այս շրջանիս մէջ
Անուշ է, անուշ
Մայրական կաթից։
Իմ սրտին երբէք
Մի քանի մարդկանց
Խօսքը չի դիպչի,
Երբ իմ աշխատանք
Նոքա կարդալիս
Հարց տան. «Թխած չի՞»

1890 թ. 9 Մարտի.

(Ն. ԻՄ ՀԱՅՐ Ց. Խ.)

Քեզ եմ նուիրում,
Ցարգելի հայրիկ,
Այս իմ աշխատանք
Զնչին և փոքրիկ,
Թող գիտուն ազգը
Իւր բարերարաց
Կանգնէ արձաններ
Արժանի փառաց։
Թող աշուղ անվախ
Հերոսի արած
Երգէ յաւիտեան
Երգով անմոռաց։
Ես էլ կը կանգնեմ
Իմ սրտի միջին
Ինձ համար, մեծ մարդ,
Քո արձան անգին։
Ես էլ միշտ կ'երգեմ
Անունը մեծիդ,
Տալով փառք, պատիւ
Պաշտելի անձիդ։
Դու քո մուրացիկ
Վատ ժամանակին
Դուրս բերիր խաւ'րից
Իմ ազատ հոգին։
Ազատութիւն քեզ,
Ազատ բարերար,
Գործով և խելքով
Որդուդ օգտակար։

* * *

Աշխարհիս մէջ, իմ կեանքում
Ո՛չ մի բան ինձ չի զբաւում.
Եւ իմ հպարտ, վեհ հոգին
Չի խոնհարուիլ ոչոքին։

Իմ սիրտ, իմ միտ, իմ բարքառ,
Ե՛ւ անկեղծ են և՛ արդար.

Եւ ինձ տուած երկնից ձիրք
Թող չը շարժէ մարդկանց կիրք։

Ես չը գիտեմ ոչ երբէք
Լաւին, վատին ասել մէկ.
Ես չը գիտեմ կեղծաւորէն
Սէր վայելել ամենէն։

Ճշմարտութեան որդեգիր
Ես գրուած եմ պարտադիր.
Եւ իմ բռնած ուղղութիւն
Ե՛ւ սէր է և՛ միութիւն։

Արդարութիւն կը պաշտեմ.
Կեղծութեան հետ անհաշտ եմ.
Արդարութեան լուսոյ տակ
Կը խաղցնեմ իմ գտակ։

ՄՕՐ ԱՂԲԸ.

Ո՞ւրախ որդեակ, աչքիս լոյս,
Կորցրել եմ քեզ, կեանքիս յոյս.
Ո՞ւր ես, հոգեակ թանկագին,
Քեզի մատաղ իմ հոգին։

Պայծառ ամպդ, ո՞ւր ես դու,
Ինչպէս լապտեր լուսատու.
Ո՞վ հեռացուց քեզ ինձնից՝
Քո հարազատ ծընողից։

Ցկլոր, քաղցած ու ծարաւ
Հազիւ չունիս նոր հալաւ.
Քո մօրից հեռացած,
Այլոց դերի ես դարձած։

Մօրը մահ է, երբ որդին
Ծառայէ այլոց օգտին.
Այլ նա ինչո՞ւ է մնում
Այս ցաւալից աշխարհում։

1887 ամի 1 Յունվարի.

ՈՐԲԸ.

Տէսէ՛ք, որբը փողոցներով
Ման է գալիս ձեան երեսով.
Լեզուն կապուած, ոտքերը բաց,
Այս խօսքերն է կրկնում կամաց։

«Իմ կեանք սև ացաւ այն օրից,
Երբ զրկուեցայ ես իմ մօրից.
Ո՜հ, մայր իմ, անուշիկ ծնող,
Արդեօք ի՞նչու դու մատար հող։

«Ի՞նչու դու ինձ շուտ մոռացար.
Արի՛ ինձ էլ դերեզման տար.
Մի՞թէ չես տեսնում իմ տանջանք,
Առանց քեզի սև է իմ կեանք։

«Բա՛ւ է երթամ ես այլոց դուռ
Հաց խնդրելու, մեկնած իմ կուռ.
Բա՛ւ է շրջեմ փողոց է փողոց.
Ե՛կ վերջացու իմ լաց իմ կոծ։»

Բայց նորան չըկար լսող,
Ո՛չ մայր, ո՛չ անուշիկ ծնող.
Նա որքան էլ արտասուեցաւ,
Մօրից պատասխան չ՚ստացաւ։

ԲԱՂԴ.

Ո՛վ խաբեբայ անզութ բաղդ,
Բաւ չէ՞ դու ինձ վշտացնես.
Քո անիրաւ բաղուկներով
Խեղճ թշուառիս հարուածես։

Բաւ չէ՞ այդքան քարանաս
Ու խղճիդ դէմ մեղանչես.
Բաւ չէ՞ ինձ հետ անհաշտ մնաս
Ու ինձ թշուառիս տանջես։

Բաւ չէ՞ ուրիշն դանում
Դերի, ստրուկ ինձ շինես.
Նրանց ծանր խօսքերով
Հոգիս ու սիրտս մաշես։

Դէհ, շուտ արա՛, հաշտուիր,
Եղիր դու ինձ բարեկամ.
Բա՛ւ է ոլքան ատեցիր,
Ինչպէս նախանձ չարակամ:

1887 թ. 15 Օգոստոսի.

ՀԱՐՈՒՍՏ.

Ես շատ եմ նախանձում, հարուստ, քո փառքին.
Քո բաղդին, ապրուստին և ուրախ կեանքին.
Ուզում եմ քեզ նման լինել բաղդաւոր.
Ուզում եմ քեզ նման ապրիլ փառաւոր:

Ա՜խ, ուրնս լինէր տանդ նման պալատ.
Ամենայն ինչ լինէր նորանում առատ.
Գրպանս էլ գրպանիդ պէս թէ լինէր հարուստ,
Այն ժամ «աղայ» ես կը լինէի դրուստ:

Այն ժամանակ չէի նախանձիլ տանդ.
Մ'ինքս էլ չէր պատկերացնել սեղանդ.
Կուենայի գինի, գառի խորոված,
Կուտէի, խմէի պէս-պէս ոլորած:

Բայց չը լինէի ժլատ, փողասիրաշտ, քսու,
Անխիղճ ու անպարտաճանաչ ինչպէս դու.
Չը լինէի աղքատին դռնից աքսորող.
Կատուի աչքը կապող, ապա հաց ուտող:

Չը լինէի քեզ պէս սուրբ գիրքը ստող,
Աղքատ ու հարազատ եղբօրս ատող.
Հարուստ բարեկամիս սիրող ու պատուող,
Բայց խեղճ չքաւորին տունդս չը թողնող:

1888 թ. 9 Յունվարի.

ՎԵՐՋԻՆ ՀՌՈՒԱՉՆԵՐ.

Աշխարհ, աշխարհ, անդութ աշխարհ,
Վաթսուն տարիս միջումդ անցաւ.
Ո՛չ անդորը կեանք, ո՛չ բերկրութիւն
Իմ թշուառ գլուխս ունեցաւ:

Ճակտի քրտինք, բազկի զօրութիւն
Եւ թարմ ոյժեր միջումդ կորան.
Մատաղ հասակ, դառն ծերութիւն
Եւ շատ վաստակք անհետացան:

Վերջը անզօր, լի ցաւերով
Մահճում ընկած մեռանում եմ.
Եւ շատ անէծք քեզ թողնելով,
Անբաւական հեռանում եմ:

1888 թ. 15 Օգոստոսի.

Ն. ՕՐ. № №

Երբ հոգւոյս աչքը բացւեցաւ յանկարծ,
Երբ ես զարթնեցայ իմ անուշ քնից,
Ճանչցայ մի սիրտ, մի հոգի անկեղծ,
Որ ունի շնորհ սիրելիլ ամենից։

Հայ օրիորդի միակ տիպարը
Նա իր ճակատի վերայ է կրում.
Եւ համեստութեան խոհեմ նշանը
Նորա կրակոտ աչքի մէջ փայլում։

Նրա մատաղ կուրծքը դեռ չէ ընդունել
Սիրոյ բորբոքւող, անշէջ կրակը.
Նա անմեղ է և շատ գեղանի,
Ինչպէս երկնային գեղ հրեշտակը։

Նա հրաշալի է և հրապուրիչ.
Զօրութիւն ունի նա մագնիսական.
Ճիշտ ձգտում, քաշում է դէպ իրան
Իմ սիրան, իմ հոգին միանգամայն։

Սիրում եմ նորան 'ի բոլոր սրտէ
Սիրում եմ նորան ես անկեղծօրէն.
Եւ շատ նոր տարիք այս նոր տարու հետ
Մաղթում եմ նորան Երկնաւոր Հօրէն։

1889 թ. 1 Յունվարի.

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՆ.

Յունուար ամսի վերջերումն էր,
Երբ գիւղացին հաղիւ հաղ
Երեկոյեան ժամը հընդկին
Ընկաւ քաղաք վազէ վազ։

Բայց գիւղացու բաղդը լաւ էր.
Պատճառ՝ տեսաւ տէրտէրին.
Եւ գլխարկը վեր առած,
Համբոյր մատուց ձեռքերին։

«Տէր հայր, խնդրեմ ինձ այսօր
Ձեր տանումը մի տեղ տաք.
Տեսէք, ցրտի սաստկութիւնից
Պաղել, դարձել եմ դիակ»։

—Սխ որդի, ես հիւրին շատ եմ
Ցարգում, քան բարեկամիս.
Բայց ինչ արած, որ այսօր
Մահացել է խընամիս։

Ես չեմ կարող կատարել
Ձեր պահանջը այսօրուայ.
Թէ որ վաղը դուք կը գաք
Իմ տանումն ձեզ տեղ կայ։

1889 թ. 27 Յունվարի.

* * *

Անցան դարեր հին և խաւար.
Եկաւ և մի լուսաւոր դար.
Տուեց մարդկանց ազատութիւն,
Սովորել խելք և դիտութիւն։

Երկու սեռը հաւասարեց.
Երկուսին էլ ազատ արեց.
Սիրել ազատ, սիրուիլ ազատ
Բարձր խելքով պատուէր դրեց։

Բայց շատ մարդիկ խաւարից կոյր
Նորա լուսին են դեռ անհաս.
Շատ բռնութիւնք և մութ բաներ
Նոցա միջից են անպակաս։

1889 թ. 28 Փետրվարի.

Ն. ԻՄ ԸՆԿԵՐ Ֆ. Ս.

Մանկութեան օրեր ուրախ տարիքով
Անցուցել ենք մենք միշտ իրարու քով.
Եւ մեր սրտերը հաշտարար աչքով
Նայել են միմեանց համակրանքով։

Սիրել ենք իրար. եղել միշտ ընկեր.
Եւ բարեկամութեան ջինջ պատկեր

Կրել ենք մեր մէջ, որպէս հայելի,
Անարատ սիրով առատ, լի ու լի։

Եւ այսուհետև էլ այդ մեր սէրը
Թող ամուր կապէ մեր տաք սրտերը.
Որ այս կեանքիս մէջ ո՛չ մի պատահար
Զառնէ երկուսիս անծանօթ, օտար։

Եւ թող իմ օրտաբուղխ ջերմ աղօթքը
Բարձրանայ երկինք Տիրոջ ոտքը.
Ուր Տէրը ամենին խնամատար
Նոյնպէս ձեր միտքը ածէ 'ի կատար։

1889 թ. 21 Օգոստոսի.

ՄԵԹՈՒՆՈՂ ՊԱՏԱՆԻՆ.

«Ամեն մարդ աշխարհիս մէջ
Իւր ճակատագիրը ունի.
Բայց ամենի ճակատագրը
Միևնոյն փայլը չունի։

«Կան մարդիկ, ով անիսնայ
Կը վայլեն ամեն բաներ.
Կան էլ մարդիք, որ բարից
Կը կրեն ամեն չարիք։

«Այդպէս բաղդը պանդխտիս
Հանեց մինչև եթերը.

Եւ ես մի կարճ ժամանակ
Վայլեցի նորա սէրը։

«Ունեցայ մի սիրուհի՝
Անուշ խաժակ Աթենաս.
Բայց բաց գնաց ձեռքերէս.
Թռաւ, ելաւ նա Պառնաս։

«Նա այն տեղից ամեն օր
Աղէ աղէ արցունքով
Դիմում է ինձ թշուառիս
Իւր վերաւոր բաց կրծքով։

«Նա կանչում է ինձ, տեսէք,
Այն թեւերը բաց արած.
Եւ ես կերթամ նորա մօտ
Մինչ շունչս չէ դատարած։

«Կը փաթաթուիմ կրծքովը
Եւ կը դառնամ յ՚Արլէզ.
Նորա վերքը դժելով,
Նորան կեանք կը բաշխեմ ես։

«Ամենեղ տուած թեւ թեւի
Զափենք ելթերը անհուն.
Եւ մեղ կեանքից զրկողին
Անէծք կարդանք օրն 'ի բուն։

«Երկնքումը միասին
Կառնենք պսակ զարդարուած.
Ուր իր հրեշտակներով
Պահապանէ մեզ Աստուած։

«Դէհ, մի թռիչք, զոյգ թեւեր.
Ոյժ ստացէք, դէհ, թռչէք.
Եւ սիրելոյս կրծքի վերայ
Հանգիստ հոգւոյս դուք տուէք։»

Այսպէս խօսեց պատանին
Վերջին հոգոց հանելով.
Գնաց դանել սիրուհուն
Ծաղիկ հասակ թողնելով։

ՈՒԽՏԱՊԱՀ ՄԱՀԸ (Թարգմանութիւն.)

Իսպանեայի մէջ, հին ժամանակներում,
Երկու տարբեր ազգեր էին բնակվում.
Իսպանացիք՝ քրիստոնեայ, ջերմեռանդ,
Իսկ մաւրերը՝ մահմեդական մոլեռանդ։
Երկուքն էլ միմեանց հետ ապրելով շատ խիստ,
Տուր ու դմբոցից չէին առնուած հանգիստ.
Եւ մարդասպանութիւն՝, երկու ազգերի
Գեղեցիկ պտուղն էր թեթեւ վէճերը։
Այսպէս մի անգամ անհաշտ իսպանացի.
Դեռին գլորեց իւր մաւր երկրացին.

Եւ որպէս զի անձամբ չանկանի կորուստ,
Նա այնտեղից առաւ շտապով փախուստ։
Գալով տեսնելով մաւրին ցեղակիցներ,
Բարձրացրին աղմուկ ու աղաղակներ.
Եւ մի քանիսը վրէժխնդիր հոգով
Ընկան դէս, դէն դահճին դտնելու մտքով։
Իսպանացին այն ժամ ժողուած իւր հոգին
Հազիւ ներս վազեց իւր առջևի այգին.
Պատմեց նա այգեպիրոջ իւր գլխի գալիք,
Թափելով աչքերից արտասունք լիք լիք.
Խնդրեց պաշտպանութիւն այգեպէր մաւրից,
Պահել իւր անձը չար ոսոխներից։
Որդեկորոյս մաւրը, անտեղեակ գործին,
Պաշտպան կանգնեցաւ իւր որդու սպանչին.
Եւ իբրև նշան իւր հաստատ խօսքերին
Խնձորի կէսը տուեց նա տար հիւրին։
Յետոյ հիւրասէր մաւրը Իսպանացուն
Երեկոյեան ժամին չուտ տարաւ իւր տուն.
Եւ այնտեղ ըստ սրդին լաւ հիւրասիրեց,
Փափուկ անկողնի մէջ հանգիստ քուն դրեց։
Այդ գիշեր «կան մարդիկ մաւրի մօտ,
Բերելով նրախտին չարագուշակ բօթ.
«Թէ ոչ օրուայ սպանուածը փողոցի միջին
Է հարազատ, միակ Թանկագին որդին»։
Հիտապահ մաւրը հաստատ իւր սուրը երդման,

Վրէժխնդիր չեղաւ իւր որդու սպանման,
Թէ և հասկացաւ որ իւրեան անկողնում
Իւր միակ որդու դահիճն է քընում։
Գնաց մաւրը մի լաւ երիվար թամբեց,
Եկաւ իւր օտար հիւրին զարթեցրեց.
«Դու իմ թանգ որդուս պատրաստեցիր դարան
Եւ նրա հօր մօտ դտար պատսպարան.
Վեր կաց, շտապիր. հաստատ իմ խօսքերին
Վնաս չեմ տալ իմ տունս եկած հիւրին.
Գնա այստեղից և միշտ օրհնէ Աստուած,
Որ ղըսպեց ինձ», վշտագին մաւրը ասաց։

ՀԱՄ ՅՂՈՐԹ, ՀԱՄ ՍՈՒՏ.

Գլուխդ դատարկ
Ջէպդ լիք,
Դու ես խելօք
Անկալ ծիք։

Թէ մօտնի ես
Հագնուած,
Բոլորից ես
Յարգուած։

Թէ շորով ես
Դու աղքատ,
Շատ խնդացող
Կայ վերատ։

Թէ ուղղախօս
Մարդ ես դուն,
Դուր չես գալ
Շատ շատերուն։

Թէ լեզուով ես
Կեղծաւոր,
Պատիւ ունիս
Փառաւոր։

Թէ մարդ ես դու
Քարոզող,
Քո անունդ է
Շատ խոսող։

Թէ քահանայ
Դու անշահ,
Քեզ կը կանչեն
Միշտ բոշայ։

Թէ դու տղայ
Շատ ազնիւ,
Բամբասողիդ
Չկայ թիւ։

Թէ դու աղջիկ
Միշտ խոհեմ,
Տանը նստիր
Անգոհ եմ։

Թէ դու աղջիկ
Անբզգամ,
Կը շատանայ
Քո պատգամ։

Թէ տանտիկին
Տընարար,
Կրկիտ անուն
Վերադ առ։

Թէ տանտիկին
Ողորմող,
Քեզ կը կանչեն
Տուն քանդող։

* * *

Զիւնը եկաւ. սաստիկ ցրտից եղանակ.
Բնութիւնը սառեց միանուագ.
Օդում թռչուններ էլ չեն երևում,
Սոխակը վարդին էլ չի բարևում։
Պաղել է ցրտից առուակը արագ.
Փոխել է գարնան զեփիւռը բարակ.
Երկինքը պատել է թանձրապատ մշուշ,
Երկրին արևը կերևայ ուշ ուշ.
Նա կորցրել է ջերմութիւնը իր.
Էլ չի տաքանում սառցապատ երկիր.

Կեանք, կենդանութիւն մարդկանցում սառել.
Դարտ ու դասաւատ նոցա տեղ առել.
Բայց այդ ընդհանուր օրէնքին ներհակ,
Սիրտս չէ փոխել ձմեռ ժամանակ.
Արևան տաք շողին իմ երակներում
Դէպ յառաջ, դէպ հեռուն է ինձ հրում։
Եւ սիրոյ տաղնապ և սիրոյ շղթեր,
Խանձում են, խանձում իմ սրտիս կողեր։

1889 թ. 27 Նոյեմբերի.

1001/2020

ԵՐ ՍԻՐՈՒՀԻ.

Ես քեզ գիտեմ ինձ արև,
Դու ես ինձի լոյս տալիս.
Արևելքում ինձ համար
Դու ես կանուխ գարս գալիս։

Ճառագայթքդ ծակում են
Աչքեր, դէմքիդ նայելիս.
Բայց այդ վառվռուն դէմքդ
Է իմ պայծառ հայելիս։

Ինձնից դէմքդ ծածկում ես
Դու քո մայր մտնելիս.
Դարձեալ ես քեզ տեսնում եմ
Երազիս մէջ քնելիս։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A Публичная Библиотека
7/XI-1922

Ուրմէն առանց քեզի
Չեմ կարող երկար մնալ.
Դեռ գարունս չը տեսած
Կընամ գերեզման գնալ.

1888 թ. 20 Դեկտեմբերի.

Մի գաղտկեր.

Երկինք ամպամած, ծով փոթորկալից
Երբ կը դառնայ սրտիկս դեռհաս,
Երբ ծանր հոգսեր, մոքեր ահալից
Կը թափուին մէկէն 'ի մէկ իմ վերաս,
Այն ժամ ես միայն մէկի պատկերով
Կը հանգստանամ սրտով և հոգւով:
Եթէ մի օր ես չը տեսնեմ նորան
Աշխարհս կը լինի ինձ նեղ գերեզման,
Իսկ եթէ տեսնեմ և հետը խօսեմ
Աշխարհի տէրը անկարծիք ես եմ:

* * *

Պարտիզումը մի վարդ տեսայ
Դեռ կոկոնում, դեռ չը բացուած.
Սոխակը էլ որպէս փեսայ,
Նորա թփին էր մօտ նստած:

Անկեղծ սրտով, յուզած հոգւով
Սոխակն իր երգն էր երգում.
Մերթ երգում էր, մերթ այլ մոքով
Վարդին նա յաճախ ակնարկում:
Նա երգում էր հեզապարիկ.
Առուն ամօթից չէր սահում.
Եւ զեփիւռը հեզաթռիկ
Ցուզած երգչին էր ձայն պահում:
Նա երգում էր տաք եռանդով
Նա գովում էր իւր սիրուհուն.
Եւ սպասում էր խառնակ սրտով
Նաղելու միակ բացւելուն:
Ինձ ասում էր նա երգելիս
Արցունք աչքերից թափելով.
«Ուրքան էլ տքնիմ, սիրելի՛ս,
Վարդին չեմ տեսնիլ բացւելով»:

1889 թ.

Գարուն.

Քեզանով լոյս կը հանեմ
Մատաղ սրտիս մռայմունք.
Քեզանով ես կը յայտնեմ
Զեղուն հոգուս զգացմունք:

Քեզանով ես կը կանգնեմ
Տիրոջ անուան փառաբան.

Քեզանով ես կը դողեմ
Աչագեղ կոյս աննման։

Քեզանով ես կը թռչիմ
Վեր երկինքը անսահման.
Վառ ըզգացմանց, սրտիս իմ
Դու ես պերճախօս թարգման։

Քեզանով ես կը լենիմ
Հարազատ երկրպագու
Ճշմարտութեան, արտասունք
Սրբոց աղքատ որբերու։

Քեզանով ես կը վանեմ
Վիշտ, թախիծ շատ սրտերի.
Քեզանով ես դուրս կը դամ
Դէմը մարդկան կրքերի։

Քեզանով կը յանդիմանեմ
Վատ արարքը մարդերի.
Քեզանով ես կը կանգնեմ
Տէր և պաշտպան անտէրի։

Դու ես զէնքը պոյետի.
Դու ես սիրտը հեզ երգչի.
Նա կը շարժէ քեզ ջրոս դի.
Նա ոչ ոքից վախիլ չի։

1889 թ.

* * *

Շուշանագեղ կոյս քնքուշ,
Զարթիր մանկութեան քնից.
Սիրոյ խօսքերն անուշ
Թող դուրս թռչեն քո բերնից։

Ե՛կ պարտէզը ճեմելու,
Ե՛կ վարդերը տեսնելու.
Ե՛կ զեփիւռը հանդարտիկ
Շփէ քո լայն ճակատիկ.
Եւ սիրուն շարքը մազերիդ
Սփռէ չորս կողմը գլխիդ։

Ե՛կ ոսկակի մեղմ երգը
Ցարուցանէ քո փոքրիկ
Սրբութեան տաճարումը
Սիրոյ այրող փոթորիկ։

Ե՛կ սիգաճեմ քո իրան
Ցոյց տուր քեզ սիրող երգչին.
Դէթ նորա սիրոյ երգը
Հասնի քո դուլ ականջին։

* * *

Երբ կը գայ հանդստեան ժամ,
Ես իմ յոգնած գլխին

Հանգստութիւն կը տամ
Մտած փափուկ անկողին.

Եւ այդ ժամանակը
Մի նոր բան կը յիշեմ.
Սրտիս մեայլ թախիծը
Որով հեռու կը քշեմ:

Թէ գալու է մի օր
Դուցէ այս ժամին,
Որ ես պիտ մանիմ մի նոր
Սրտիս ուզած անկողին:

1889 թ. 5 Սեպտեմբերի.

* * *

Վեր առ դու, երգի՛չ,
Քընարըդ խօսուն,
Դալձի՛ր փարատիչ
Դուն իմ ցաւերուն:

Երգի՛ր ինձ համար
Իմ անցած օրեր,
Եւ վառ մանկութեան
Քաղցր երազներ:

Միտքս բեր թէ ես
Մայրիկիս գրկում
Հոգսերից ազատ
Ինչ էի անում:

Երգի՛ր և հիմայ
Այժմեան դրութիւն
Ցիշի՛ր և հիմայ
Անցած մանկութիւն:

Այժ առ ի լարերիդ.
Քո դիւթիչ երգով

Դուցէ նորոգես
Կեանքս լի վշտով:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ.

Մանկութեան անգին օրեր,
Ինձնից հեռու գնացիք.
Եւ իմ պարզ, ազատ հոգին
Նեղ սահմանում փակեցիք:

Ձեր տեղ իշխող սև տարրը
Ինձ յիշել է տալիս ձեզ.
Ո՜հ, ձեր սուրբ յիշատակը
Ընկելո՞ւ է իմ սրտէս:

Ձեր սուրբ վարագուրի մէջ
Ազատէի հոգսերից.
Չէի ճնշում ներկայիս
Հալող մաշող կրքերից:

Կրկին ե՛կ դու, մանկութիւն,
Կեանքիս սահման լայնացու.
Գէթ մի անգամ իմ հոգին
Անմեղութեամբ փայլեցու:

1889 թ. 28 Հոկտեմբերի.

* * *

Լինիմ էլ Կրեսոս անուանը արժան,
Սիրտս իմ եարից պիտ՝ մնայ անբաժան.
Լինիմ էլ երկնքում Աստուած Վերին
Էլի պիտ սիրեմ իմ սիրահարին։
Անսահման Աստուած, Աստուած դու անհուն,
Բաղդաւորութիւն տուր իմ սիրուհուն.
Թող նա ինձ չը սիրէ. միայն ողջ մնայ.
Նորա լոք շուքը ինձ նոր կեանք կը տայ։

1889 25 Սեպտեմբերի.

* * *

Խաւար ամպամած գիշեր,
Սիրտս քեզ նման է զուտ.
Հաղար մի սև սև դարտեր
Կը պաշարեն ինձ շուտ շուտ։

Կը վերկենայ մի քամի
Եւ կը ցրի քո ամպեր.
Բայց ի՞նչը պիտ ցրի
Իմ այսքան անթիւ դարտեր։

Կը գայ պայծառ առաւօտ
Եւ կը բերէ քեզ արև.
Բայց ի՞նչը պիտ չը թողնի
Ինձ այս դարտերի ներքև.

* * *

Մենք օրինակ առնելով Եւրոպան
Մթից լոյսը վաղում ենք անխափան.
Եւրոպայի ցուցած ճանապարհով
Ճիշտ գնում ենք մենք մեր համեստ քայլերով։
Լուսաւորուած Եւրոպայի նման
Լուսաւոր է և մեղնում ամեն բան.
Մեր ճաշակը շատ շատ է նըրբացել
Մատաղ սերունդն էլ վաղուց լաւացել։
Մեր աղջիկը դուրս եկած խաւարից
Գիտէ ճիշտ զատել փափուկը կոշտից.
Մօրը գործած գիւլպէն կոշտ է իւր ոտին.
Նա հետևում է նորամուտ «մոտին։»

ՄԻ՞ԹԻ ՄԵՆ ԲԱՆ Է.

Հիւանդ որդուն մայրը հարապատ
Անքուն աչքերով աղօթք անէ
Կեանքը մահից փրկելու համար
Մի՞թէ մեծ բան է։
Պատառող գայլը ընկած հօտում
Հովիվի սիրելի գառին տանէ.
Անզէնի դուրս գալը գայլի դէմ
Մի՞թէ մեծ բան է։
Գիշատիչ ցինը սուր ճանկերով
Թուխսի փափլիկ ճուտը վեր հանէ.

Անդօրի կռիւը հզօրի դէմ
Մի՞թէ մեծ բան է։
Սիրել իրար, մարդերի համար
Աստուածադիր մեծ պատիւրան է.
Սիրուհւոյ համար խաչ ելնելը
Մի՞թէ մեծ բան է։

1882 թ. 12 Նոյեմբերի.

* * *

Բարեգութ տէրութեան մէջ
Մենք ապրում ենք ապահով.
Մեր տղէն, մեր աղջիկը
Սովորում է հայ լեզուով։

Ողորմած տէրութիւնը
Հոգս է տանում մեր վերան.
Հայ տղէքը շատերով
Գնում են համալսարան։

Հայ պատանիք օտարի
Ուսումնարանի միջին
Իւրեանց աշխատութիւնով
Աշակերտք են առաջին։

Հայ նազելի աղջիկը
Իւր դորձերումն է արի.

Կեանքի անհոգ շրջանում
Խելօք, պարկեշտ ու բարի։

(ՆՈՒԻՐ ՀԱՅ ՏՂԻՆ.)

Թէ մեծ լինիս, թէ փոքր,
Թէ խօջայ, կամ թէ քեասիբ,
Պիտ ունենաս սրտիդ մէջ
Բարի նախանձ ու թասիբ։

Նախանձը ու թասիբը
Յառաջկելու նշան են.
Նոցանից զուրկ մարդիկը
Մարդիկ չեն, այլ անբան են։

Թէ որ կուզես ընկերդդ
Գերազանցել քո անձը,
Նախ պիտ՝ դնես սրտիդ մէջ
Թասիբն ու նախանձը։

Թէ որ կուզես մշտապէս
Ապրիլ ազնիւ, երջանիկ,
Պիտ՝ յարգես նախանձ, թասիբ
Ոչք են և կեանքիդ դաղանիք։

Ունիս նախանձ ու թասիբ
Ունիս նոյնպէս ապագայ.
Չունիս նախանձ ու թասիբ
Նախ թող հողը գլխիդ գայ։

ՍԻՐՈՒՄ ԵՄ.

Սիրում եմ երկար գիշերը ձմռան,
Հայի «քուրսին» և ընտանիք նորան.
Սիրում եմ այնտեղ պապիս պարզութիւն
Եւ անցած տիոց, անցած պատմութիւն:
Սիրում եմ հայ պառաւը աղօթող
Պապի քաջութիւն թոռին աւանդող.
Սիրում եմ նորա հեքեաթն ու առակ,
Եւ նորա լսող խումբը բոլորակ:
Սիրում եմ հայ հարսը, հայ աղջիկը,
Նոցա աշխատանք և նոցա ճիգը.
Սիրում եմ աղջկայ մեղեդին դիպչող
Կարմիր ու ճերմակ դէմքը ամաչող:
Սիրում եմ մանկանը օրօցքում պարկող
Եւ արթուն կատուին օրօցքին հսկող.
Սիրում եմ նոյնպէս ժիր թիթեռնիկին
Որ շրջան կառնէ շուրջը կրակին,
Որ կարծես ամեն շրջան առնելիս
«Իրար սիրեցէ՛ք» լինի ասելիս:

ԱՅՆ Ի՞ՆՉԵՐ ԵՆ.

Մայիսեան կոկոն վարդի վերան
Այն ինչե՞ր են, որ կը հուրհուրան
Արեգական շողերի տակին
Ձերդ դահարներ պայծառ, լուսադէմ:

Հա՛, յողեր են, ցողեր առաւ՛տեան,
Որ վարդին մեծ զօրութիւն կը տան:
Եւ այն ի՞նչեր են, որ հրաշագեղ
Կոյսի աչերից խաժուժ, շքեղ
Մարգարտեայ հատիկների նման
Գլորվում են այտերի վերան:
Հա՛, արցունք են, արցունք կուսական,
Որ սիր՛հար սրտին հով ու զով կը տան:

ՄԻ ԳԻՇԵՐ.

Հեռու, հեռու ինձանից
Մորփիոսի դու գիմակ.
Այս գիշերը ես անքուն
Պիտի նայեմ շարունակ:
Լոյս տուր, գիշեր, ինձ համար,
Վանէ՛ քունը աչերիս.
Թող անմեղ երեխայի
Նինջը դիտեմ իմ եարիս:
Թող դիտեմ մարմարիոն
Գողտրիկ կուրծքը կիսամերկ,
Որի վերայ հանգչում է
Բաց թևերով ջուխտակ ձեռք:
Լոյս տուր, դիտեմ երեսը
Կլոր, փափուկ թշերով,
Որոնք անչափ գիւթիչ են,
Նամանաւանդ գիշերով:

(ՆՈՒԷՐ ՕՐ. № №)

Ես քեզ մոռնամ, իմ ազնիւ սիրական.
Քանի որ այս աշխարհում ես ողջ կամ,
Քո յիշատակ, քո անունը ինձ մնա
Զեն կորցնել իւրեանց գները Թանգագոյն:
Սրտիս մտիկ հոգեակ դու Թանկագին.
Վերջին հրաժեշտ տամ քեզ տխրագին.
Էլ չեմ տեսնել հրաշալի պատկերդ
Էլ չեմ սեղմել ջերմագին ձեռքերդ:
Անկեղծ սիրով սիրած կոյս անապակ,
Ինչքա՞ն աՀնեմ ես քեզնից իմ փափաք.
Երազներիս, ցնորքներիս առարկայ
Քեզանում գիւթական զօրութիւն կայ.
Թէ որ ես քեզնից եղայ բացակայ
Ի՞նչ տխրութիւն իմ վերուս պիտի գայ:
Բոպէաչափ անցեալը ինձ համար
Պիտի բերէ խորին Թախիծ և խաւար.
Այդ խաւարում ես կը մնամ կաշկանդուած.
Դէթ մի համբոյր կրծքիդ միջին, անաստուած:

ՍՈԽԱԿ ՄԱՑԻՍ Է.

Սոխակ, մայիս է,
Պարտէզը հասի.
Վարդը կոկոնում
Քեզի կրսպասի:

Նստիր կուսական
Թփերի վերան,
Ու քո երգելով
Բացեցուր նորան:

Երգիր սիրաշունչ
Քո տաղեր անգիր.
Զեր միջի սէրը
Կրկին նորոգիր:

Կը քաղէ վարդըդ
Տալով քեզ կրսկիծ,
Դու մի՝ մորմոքայ,
Չի նա տգէտ է.
Բայց եթէ մէկը
Վառ սրտի սէրը
Բիրտ դասակարգից
Նա յանձանք գիտէ:

ԳԱՐՈՒՆ.

Ուրախ է բնութիւն, ուրախ են մարդիկ.
Անցաւ ցուրտ ձմեռը, եկաւ գարուն.
Թռչնոց երամներ կարգան աւետիք
Երկրին, կապուտակ եթերքից սիրուն:
Ձիւնից բաղկացած ու քամոտ առուն
Ամպի պէս դոռում է իւր նեղ տեղում.
Դեղեցիկ արտուտը ձայնով երերուն,
Բարձրը թռչելով, երգ է գեղ գեղում:
Արձագանք տալիս ձորեր ու լերինք.
Հովիւը նստած մերկ ժայռին անդարտ
Սուլում է, սուլում հովական սրինգ
Եւ հսկում վերից իւր հօտը հանդարտ:
Աղբիւր, աղբերակ պարզ են ապակուց.
Արևի շողեր առած ջրերին
Փայլփայլեցնում են առաւել ոսկուց
Հաղար մի գոյնով ժայռի քարերին:
Անամպ է երկինք. ուրախ են սրտեր.

Երկիրը ունի մի այլ նոր պատկեր.
Գիւղացին վարել, ցանել է արտեր.
Սոխակը արդէն երգում է երգեր։

ԵՐԱՆԻ ՔԵԶ ԼՈՒՍԻՆ

Երանի քեզ մշտական լուսին,
Որ կը ծագես երկնքի երեսին.
Որ քո շողերով լուսանման,
Կը լուսաւորես աշխարհը համայն.
Որ գիշերուայ անչափ եթերը
Կը հակոսես, խաղլով քո դերը.
Հեռու աշխարհից, հեռու այստեղից,
Հեռու այստեղի աղտեղի ցեխից։

Երանի քեզ փոփոխուող լուսին,
Որ կը փոխուես ամեն մի ամսին.
Որ քո նոր նոր փոխուելովդ միշտ
Ծերի սրտին կը պատճառես վիշտ.
Որ նոր օրերում քո մանկութեան
Կը պարգես դէմքդ մռայլ ծերութեան
Վանելով քեզի պատող դեղնութիւն
Առնելով նոր ձև և նոր բնութիւն։

Վ Ե Ր Ջ.

10861

2013